ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլոգ. և գյուղատ. գիտ. XII, № 1, 1959 Биол. и сельхоз. науки

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԼԵՎՈՆ ԱԲԳԱՐԻ ՕՐԲԵԼԻ

Սովետական գիտությունը ծանր կորուստ ունեցավ։ 1958 թ. դեկտեմբերի 9-ին, երկարատև ու ծանր հիվանդությունից հետո, իր կյանքի 77-րդ տարում վախճանվեց Սոցիալիստական Աշխատանքի Հերոս, Ստալինյան մրցանակի լաուրեատ, բժշկական ծառայության գեներալ-գնդապետ, աշխարհահռչակ գիտնական, հայրենական ֆիզիոլոգիայի խոշորագույն դպրոցներից մեկի ստեղծող Լևոն Աբգարի Օրբելին։



Գիտության ասպարեզ իջնելով 1901 թվականին, Լ. Ա. Օրբելին անփոփոխ կերպով գտնվում էր նրա առաջին շարքերում՝ սկզբում որպես մեծ Պավլովի աշակերտ ու անմիջական օգնական, այնուհետև որպես երիտասարդ գիտական աշխատողների կոլեկտիվի ինքնուրույն գիտական ղեկավար և, վերջապես, որպես իր ուսուցչի ժառանգորդ ու նրա գործը շարունակող։

Լ. Ա. Օրբելին օժտված էր այնպիսի հատկություններով հազվագյուտ զուգակցությամբ, որոնք հանդիսացան նրա բացառիկ գիտական նվաճումների պատճառը, ֆիզիոլոգ-փորձարարի տաղանդը նրա մեջ զուգակցվում էր բիոլոգ-բնախույզի խորությանը հետ, հետազոտողի եռանդը՝ նոր դժվար պրոբլեմներ դնելու և լուծելու կարողության, գիտության կազմակերպողի աչքի ընկնող ընդունակությունների հետ։ Գիտության ոսկե ֆոնդի մեջ են մտել Լ. Ա. Օրբելու այն հետազոտությունները, որոնք վերաբերում են սիմպատիկ նյարդային համակարգության, փոքր ուղեղի ֆիզիոլոգիային, կենտրոնական նյարդային համակարգության կոորդինացիաներին։ Լ. Ա. Օրբելին լուծել է առողջապահության մի շարք կարևորագույն գործնական հարցեր ու պրոբլեմներ՝ կապված մեր Հայրենիքի պաշտպանունակության բարձրացման հետ։ Լ. Ա. Օրբելին ֆիզիոլոգիայի գիտության այն նոր ճյուղի՝ էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի հիմնադիրներից մեկն է, որը նոր հեռանկարներ և նոր ուղիներ բացեց էվոլյուցիոն ուսմունքի զարգացման համար։

Լ. Ա. Օրբելու կատարած գիտական հետազոտությունները կարելի է բաժանել երեք գլխավոր մեթոդական ուղղություններ.

1. Ֆիլոգենետիկ զարգացման տարբեր աստիճանների վրա կանգնած ներկայացուցիչների մոտ միևնույն օրգանի և նրա ֆունկցիաների ուսումնասիրության համեմատական-ֆիզիոլոգիական մեթոդը։

2. Օրգանի ու նրա ֆունկցիաների ուսումնասիրությունը օնտոգենեզում, երբ, ըստ Լ. Ա. Օրբելու ենթադրության, օրգանիզմը միմիայնակ ձևով պետք է կրկնի ավելի տեսակի անցած բազմադարյան ճանապարհը։

3. Վնասվածքների, կենտրոնական նյարդային համակարգությունից անջատման և թունավորման մեթոդը։ Այս մեթոդը, որ առանձնապես հաճախ էին կիրառում Լ. Ա. Օրբելին և նրա աշակերտները, հնարավորություն է տալիս բացահայտելու օրգանի այն ֆունկցիաները, որոնք մի ժամանակ հատուկ են եղել նրան, իսկ այնուհետև ֆիլոգենետիկ զարգացման պրոցեսում ճնշվել են հետագայում նոր հատկություններ ձեռք բերելու հետևանքով։

Ֆիզիոլոգիական երևույթների հետազոտման բնագավառում պատմական ասպեկտը Լ. Ա. Օրբելու դպրոցում դարձավ ուսումնասիրման հիմնական եղանակ և ավելի իր գրական արդյունքները։

Էվոլյուցիոն ասպեկտով մշակվող պրոբլեմների մեջ մեծ նշանակություն ունեն այն աշխատանքները, որոնք վերաբերում են կենտրոնական նյարդային համակարգության ֆիզիոլոգիայի ուսումնասիրությանը և, մասնավորապես, ողնուղեղային կոորդինացիաների ծագման մեխանիզմի հետազոտությանը։

Նյարդային համակարգության ուսումնասիրության էվոլյուցիոն սկզբունքը Լ. Ա. Օրբելուն հանգեցնում է ինտերվացիոն ազդեցությունների տիպերի փոխարինմանը մկանային հյուսվածքում։ Լ. Ա. Օրբելու պատկերացմամբ՝ ֆիլոգենետիկ զարգացման պրոցեսում տեղի է ունենում մկանային հյուսվածքի զարգացման վաղ ձևերի համար բնորոշ ինտերվացիայի ատիճանական փոխարինում կմախքային մկանունքին հատուկ՝ ինտերվացիայի ավելի կատարյալ ձևով։

Պավլովյան ֆիզիոլոգիայի մեջ կլասիկ ուղղության՝ շների վրա պայմանական ռեֆլեքսների ուսումնասիրման կողքին, որ շարունակում էին Իվան Պետրովիչի աշակերտները Կոլտուշիում ու Պավլովի անվան ֆիզիոլոգիական ինստիտուտում և ՎԻԷՄ-ում, Օրբելու կողմից կատարվում էր նյարդային համակարգության, այդ թվում նաև բարձրագույն նյարդային գործունեության ֆիլոգենետիկ էվոլյուցիայի պրոբլեմի ինտենսիվ ու բազմակողմանի հետազոտություն։

Շատ կարևոր հատված է ներկայացնում շարժողական ֆունկցիայի ուսումնասիրությունը՝ դարձյալ ֆիլո- և օնտոգենետիկ տեսակետից։ Լ. Ա. Օրբելին չէր սահմանափակվում նյարդա-մկանային պերիֆերիկ գոյացությունների հետազոտություններով։ Այդ ֆունկցիայի էվոլյուցիան ուսումնասիրվում էր նրա բոլոր օղակներում՝ սկսած գլխուղեղի մեծ կիսագնդերի կեղևից ու ենթակեղևից և վերջացրած ողնուղեղային կոորդինացիաներով։

Լ. Ա. Օրբելու գիտական գործունեությունը չի սահմանափակվում վերը նկարագրվածներով։ Գիտության մեջ նա էական ներդրում է կատարել զգայարանների ֆիզիոլոգիայի գծով։

Զգայարանների ֆիզիոլոգիայի բնագավառում Լ. Ա. Օրբելու և նրա աշակերտների կատարած աշխատանքով ֆիզիոլոգիայի մեջ հիմք դրվեց մի նոր ուղղության, որը մինչ այդ Ռուսաստանում համարյա թե չէր մշակվում։

Լ. Ա. Օրբելին մեծ հետաքրքրությամբ էր դրսևորվում պայմանական ռեֆլեքսների հետազոտման հարցով, որի մշակումն սկսել էր Ի. Պ. Պավլովը։

Ժառանգման պրոբլեմի ուսումնասիրությունը Լ. Ա. Օրբելին կատարում

էր երկու ուղղությամբ՝ 1) անհատական պայմանական ռեֆլեքսների ժառանգական ամրակայման հետազոտություն և 2) բնածին կոորդինացիաների փոփոխականության հետազոտություն։

Էքսպերիմենտալ հետազոտությունների հետ միասին նա շարունակում էր աշխատանքը հոգերուժական և նյարդային հիվանդությունների կլինիկանում, որտեղ ուսումնասիրում էր մարդու բարձրագույն նյարդային համակարգությունը։ Այդ աշխատանքի շնորհիվ պատկերացում է կազմվում կենտրոնական նյարդային համակարգության գործունեության նախկին, նորմալում ճնշված ձևերը պաթալոգիայում հայտնաբերելու մասին, որ օգնում է գտնելու հոգեկան հիվանդությունների բուժման մեթոդներ։

Անկնահատելի է Լ. Ա. Օրբելու դերը Հայաստանում ֆիզիոլոգիական գիտության կազմակերպման և զարգացման, հատկապես կադրերի պատրաստման, ինչպես նաև Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Ֆիզիոլոգիայի ինստիտուտի կազմակերպման գործում։ Այն հսկայական ժողովրդականությունը, որ վայելում էր Օրբելին, բացատրվում է նրա բացառիկ էներգիայով և հմտությամբ, որ նա դրսևորում էր գիտական աշխատանքների կազմակերպման և ղեկավարման ասպարեզում։

Իր գիտական աշխի ընկնող գործունեության ընթացքում Լ. Ա. Օրբելին բազմիցս արժանացել է մեր երկրի գիտնականների համար սահմանված գիտական բարձր պարգևների՝ Պավլովի անվան մրցանակի և Մեչնիկովի անվան ոսկե մեդալի։

Նրա գիտական ծառայությունները ընդհանուր ճանաչում են գտել, 1935 թվականից նա ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ էր, նա ընտրվել էր ՍՍՌՄ Բժշկական գիտությունների ակադեմիայի, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի և արտասահմանյան շատ ակադեմիաների, գիտական ընկերությունների ու համալսարանների իսկական անդամ։

Մի շարք տարիների ընթացքում Լ. Ա. Օրբելին վարել է ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի վիցե-պրեզիդենտի, ՍՍՌՄ ԳԱ Բիոլոգիական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի և ֆիզիոլոգների, բիոքիմիկոսների ու ֆարմակոլոգների համամիութենական ընկերության վարչության նախագահի պատասխանատու պաշտոնները։

Հայրենիքի հանդեպ և սովետական գիտության ասպարեզում մատուցած ծառայությունների համար Լ. Ա. Օրբելին պարգևատրվել է Լենինի չորս, Կարմիր Դրոշի երկու, Աշխատանքային Կարմիր Դրոշի, Կարմիր Աստղի շքանշաններով և մեդալներով։ Նա բարձր պարգևի արժանացավ 1945 թվականին, երբ նրան շնորհվեց Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի կոչում։ Նա կրում էր գեներալ-գնդապետի կոչումը, որ ամենարարձրն է ռազմական բժշկության ծառայության համար։

Ավելի քան 50 տարի ծառայելով բանակին, Լ. Ա. Օրբելին անցավ մի ուղի, որը ձգվում է Ռազմա-բժշկական ակադեմիայի ունկնդրից, ուր նա ընդունվեց 1899 թվականին, մինչև նույն ակադեմիայի պետը 1943 թվականին, որպիսի պոստը նա գրավում էր յոթ տարվա ընթացքում։

Լ. Ա. Օրբելու—բյուրեղանման մաքուր այդ մարդու, իր Հայրենիքի հայրենասիրի, Սովետական երկրի ականավոր գիտնականի անունը մտել է նրա աշխատություններով այնքան հարստացած սովետական գիտության տարեգրության մեջ։